

Արրահամու եպիսկոպոսի Երուսաղէմացոյ,  
Երջանիկ պատրիարքի Արքայ Աթոռոյս.  
Որ հանգի յիշխանութեան Սուլ-  
թան Սալահէտտէնի. թ. Ռն և Ա.» (=1192)

(Ուղեցոյց Ս. Տեղեաց, էջ 394):

ԱՅՐԱՀԱՄ Դ., ՊԵ. (1205-1218). — Իր կենդանութեան պաշ-  
տօնը կը փոխանցէ յաջորդին՝ Առաքելի (1218-1230), Արրահամ  
Դ. կ'ստանայ Բեթղէնէմի Ս. Մննդեան եկեղեցւոյն նորոգութեան  
հրովարտակը: Իր մասին, ինչպէս յաջորդին նկատմամբ Ս.  
Մննդեան եկեղեցւոյ դրան վրայ կը գտնուի հետեւեալ յիշա-  
տակարանը. «ի թուիս Հայոց Ռ. Հ և Զ: (=1227) կազմեցաւ  
գուռս Ս. Աստուածածնիս ձեռամբ Տէր Արրահամու եւ Տէր Ա-  
ռաքելոյ: Ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ որդւոյ Կոստան-  
ղէի. Քրիստոս Աստուած ողորմեսցի աշխատաւորաց»: Դուռը շին-  
ուած է ծաղիկներու և խաչ նկարներու մանրաքանդակ զարդե-  
րով, արձանագրութեան զիրերն եռկաթազիր են. նոյնին զիմացը,  
դրան միւս փեղկին վրայ՝ կայ հետեւեալ արաբերէն յիշատակարա-  
նը, եզրագոտի սուլթանին անունով և հիճրէթի թուականաւ.  
كل هذا الباب بعون الله تعالى في ايام مولانا السلطان الملك المعظم في تاريخ الهجرة سنة اربعه  
(ԺՊԵ. Ա. էջ 182, ՅՊԵ. էջ 39)

ԱՅՐԱՀԱՄ Ե., ՊԵ. (1485 - 1492). — «Որդի Իսկէնտէրի որ-  
դւոյ Ապտուլահի Բերիացոյ». սովորական ցուցակներու մէջ  
կը պակսի այս անունը. կը գահակալէ նախ իբր Աթոռակից Մը-  
կըրտիչ Իլովացոյն. և ապա առանձինն. (ԺՊԵ. էջ 237, ԸՆԴՕՐ.  
1901 էջ 292):

ԱՅՐԱՀԱՄ ՎՐԴ. ԱՅՆԹԱՊՅԻ, Մբ. — Պաշտօնեայ Ս. Յարու-  
թեան տաճարին (1680):

ԱՅՐԱՀԱՄ ՎՐԴ. ԱՊՏՈՒԼԼԱՀԵԱՆ, Մբ. — 1742:

ԱՅՐԱՀԱՄ ՎՐԴ. ԱՐԶԸՄԱՆ, Մբ. — Փոխանորդ:

ԱՅՐԱՀԱՄ ՎՐԴ. ԲԻԻՐԱԿԱՆՅԻ ԳՈՒԼԻԿԵԱՆ, Մբ. — [ \* 1835 ]  
ն. շնդկաստանի և մտերիմ բարեկամ Կալկաթայի Անգլի-  
կան եպս. Եբրի, որուն զիմելով, 1826ին, կը յաջողի Ս. Էջմիածնի  
սարկաւազ Մեսրոպ Թաղիաղեանցը ընդունել տալ Կալկաթայի  
անգլ. եպիսկոպոսական ճեմարանը. անտի ցոյսը նոյն վարժա-